Հեղինակներ՝ Հակոբ Մազլումյան և
Անի Ամսեյան

Պատկերազարդող՝
Վալենթինա Մազլումյան

Սրբագրիչ և խմբագիր՝
Լիլիթ Պողոսյան

Ծրագրի համակարգող՝
Տաթևիկ Զադոյան

- Ողջո՛ւյն, ես հեքիաթասաց պապիկն եմ: Աշխարհում ամեն ինչից շատ ես սիրում եմ հեքիաթներ հորինել, բստրել, կամ էլ հիշել ու պատմել:

Տեսնո՞ւմ ես այս ճամպրուկը: Ծը՛շ, ոչ մեկին չասես՝ կախարդական է: Գիտե՞ս, թե դրա մեջ ինչ կա. հեքիա՛թ: Հա՛, ես ճամփորդ եմ, բայց իմ ճամպրուկի մեջ ո՛չ կոշիկ կա, ո՛չ գլխարկ, ո՛չ ձմերուկ, այլ՝ իսկական-իսկական հեքիաթ: Ես այնտեղ եմ թաքցնում հետաքրքրաշարժ պատմություններ ու երբ քեզ պես փոքրիկների եմ հանդիպում, բացում և դուրս եմ բերում հեքիաթներ: Գիտե՞ս, երբ դու բացեցիր գիրքը, ինձ թվաց, որ դու հեքիաթներ շա՛տ ես սիրում. չեմ սխալվե՞լ, չէ՞:

Դե՛, ո՞ւմ ենք սպասում, արի՛ բացենք ճամպրուկը:

Բանալի պետք չէ: Ականջդ բե՛ր, ասեմ: Պիտի հետս կրկնես կախարդական խոսքերը:

«Տարա՛-բարա՛-բարա՛-բո՛ւկ, բացվի՛ր, ի՛մ սիրուն ճամպրուկ»:

- Գիտե՞ս՝ որ հեքիաթն եմ պատմելու այսօր՝ «Երեք խոզուկները և չորս փղերը»:

Ի՞նչ, նման հեքիաթ չկա: Գիտե՛մ, կատակում եմ:

Բայց որ հիմա ասեմ ներսում «Կանաչ ու կապույտ նախշերով մի կլորիկ գնդակի պատմություն»-ն է, ասելո՞ւ ես՝ էդպիսի հեքիաթ էլ չկա: Չկա՛, չկա՛, ավելի լավ: Արի, միասին հորինենք: Սա կլինի երկար ու բարդ անունով ամենապարզ ու հասարակ պատմությունը...

Կանաչ ու կապույտ նախշերով մի կլորիկ գնդակի պատմություն

Լսի՛ր, ուզում եմ սկսել, բայց մոռացել եմ՝ հեքիաթները որ բառերով էին սկսվում:

Ի՞նչ, լինում է, չի լինո՞ւմ, կար-չկա՞ր կամ ժուկով-ժամանակո՞վ:

Արի՛ մենք ոչ էլ էդպես սկսենք: Արի՛ մենք պարզապես երգենք տարեդարձի երգը, հեքիաթի հերոսը փչի տոնական թխվածքի մոմերը, և հեքիաթը թող սկսվի այդպես:

- Տա-րե-դա՛րձ է այսօր, տա-րե-դա՛րձ է այսօր...

- Օօօ՛, լսու՞մ ես, մեզ հետ միասին երգում են նաև Մանչուկի ընկերները, հարազատները: Մանչուկը մեր հեքիաթի հերոսն է, ծանոթացի՛ր... Ահա նա: Պարզվում է՝ այսօր նրա ծննդյան օրն է...

Կեսը բաղածայն, կեսն էլ ձայնավոր երգեցին Մանչուկի ընկերները, հարազատները, հայրիկն ու մայրիկը, ու փոքրիկ Մանչուկը ամուր փակեց աչքերը, երազանք պահեց ու փչեց մոմերը: Ի՞նչ իմանաս՝ ինչպիսի երազանք կարող է անցնել հինգ տարեկան տղայի մտքով, բայց, հավանաբար, դրանք նվերներ պիտի լինեին՝ պես-պես ու սիրո՛ւն-սիրո՛ւն, քանի որ մոմերը փչելն ու նվերների տուփերը փոթորկի պես քանդելը մեկ եղավ: Է՛լ մեքենաներ ու խաղեր, է՛լ մատիտներ ու գրքեր, է՛լ ի՞նչ ասես՝ չկար նվերի տուփերում: Մանչուկը գիտեր, թե դրանք բոլորն ինչպես կօգտագործի: Բայց ահա գտավ մի բան, որը զարմանալի ու տարօրինակ թվաց նրան:

- Վա՛յ, կանաչ ու կապույտ նախշերով մի գնդա՛կ...,- բացականչեց նա, բայց հետո, շուռումուռ տալով, փորձեց հասկանալ, թե գնդակը ինչու այնքան էլ գնդակ չէ, վրան էլ ինչ-որ բաներ են գրված, որ դեռ չի կարող կարդալ, քանի որ տառերը չգիտի: Պտտեց, պտտեց, հետո մի կողմ դրեց ու վազեց...

Մեր մեջ ասած՝ այդ գնդակը ես էի թաքուն դրել իր նվերների մեջ: Ինչպե՞ս թե՝ ով: Ես՝ հեքիաթասաց Պապիկը: Մոռացա՞ր ինձ, ես էստեղ եմ:

Մանչուկը մի լավ խաղաց ընկերների հետ և երբ հրաժեշտ տվեց, այնքան էր հոգնել, որ անմիջապես խոր ու անուշ քուն մտավ:

Սպասի՛ր, չծանծրանաս հանկարծ: Այս պատմությունը քո իմացածներից չէ, որ հաջորդ օրը Մանչուկը պիտի վերցնի ուսապարկը, գնա մանկապարտեզ, հետո վերադառնա, ճաշի ու իջնի բակ:

Գիշերը անսպասելի բաներ տեղի ունեցան: Ես գիտեմ՝ ինչքան ես դու առեղծվածային բաներ սիրում, չէ՞:

Բայց ոչ էն է՝ ուրախանար, ոչ էն է՝ տխրեր, քանի որ ձայնը, որ լսեց Մանչուկը գիշերվա կեսին, լացի ձայն էր:

Տրորեց աչքերը, վախվորած իջավ անկողնուց ու գնաց ձայնի ուղղությամբ:

Մեկ էլ ի՜նչ տեսնի. էն գնդակը հիշո՞ւմ ես, չէ՞, պատկերաց-րու՝ կենդանություն է առել ու լալիս է: Գույնն էլ գցած՝ ինչ կապույտ ու կանաչ, լրի՜վ շագանակագույն, ոնց որ շոկոլադի մեջ թաթախած:

- Ա՛յ քեզ բան, ինչո՞ւ ես լալիս, քեզ ի՞նչ է պատահել:

Մանչուկը փորձեց հանգստացնել նրան, ծանոթանալ հետը, հարցնել՝ ինչո՞ւ է տխուր, ի՞նչ է պատահել, բայց դեռ մեկ երկու բառ չէին խոսել, մեկ էլ էս մեր գնդակի գլխից ծուխ բարձրացավ:

Արի միասին՝ ես և դու, փորձենք փչել, հանգցնել կրակը, մինչև մեր ընկեր Մանչուկը մի բաժակ ջուր կբերի:

- Հո՛ւ, հո՛ւ...

Ահա գնդակը խմեց, հանգստացավ, հետո պարզվեց, որ ոչ էլ գնդակ է, այլ՝ մոլորակ, այն, որ տիեզերքում պտտվում են, անունն էլ՝ Երկիր:

Գիտե՞ս, չէ՞ դա որ մոլորակն է, այն մեկը, որի վրա մենք ապրում ենք: Նա մեր տունն է, մենք էլ նրա վրա՝ փոքր, համարյա անտեսանելի կետիկներ:

Մանչուկն ու Երկիրը չհասցրեցին դեռ մի կարգին ծանոթանալ, հիմա էլ մեր Երկիրը սկսեց հազալ ու ամեն հազալու հետ վրայից ինչ ասես թռավ. է՛լ տոպրակներ, է՛լ շշեր ու փականներ, պլաստմասե տարբեր մանր-մունր իրեր...

Խե՛ղճ մոլորակ, ահա թե ինչու էր շագանակագույն և ինչու էր լալիս. վատառողջ է:

Տխրեցի՞ր: Սպասիր, դրա ժամանակը չէ: Հիմա պիտի բոլորս թաքնվենք, որովհետև հեքիաթում է հայտնվելու Աղբիկը:

Հարցնում ես՝ Աղբիկն ո՞վ է: Դե՛, աղբիկը, էլի՛: Մի աղբակույտ, անճոռնի մեկը, որը մեր հեքիաթի չար հերոսն է լինելու. էլ ի՞նչ հեքիաթ առանց չար հերոսի... դե՛, չարը որն է, պարծենկոտի ու մեծամիտի մեկը...

Ահա, ուշադիր նայիր նրան... ես համոզված եմ, որ անմիջապես կկռահես, թե մեր Աղբիկը ինչերից է ստեղծված: Շատ ճիշտ ես, աղբամանից հանած անպետք իրերից... Ասո՞ւմ էի, չէ՞, անպետքի մեկն է:

Մի խոսքով, Մանչուկն ու Երկիրը մի կերպ թաքնվում են սենյակում, Աղբիկը հայտնվում է ու սկսում փորփրել այն աղբը, որ քիչ առաջ Երկրի վրայից թռավ, երբ հազում էր:

Վերցնում է տոպրակները, դնում ոտքերին և ուրախությունից սկսում է պտտվելով երգել: Չէ մի չէ. նոր գուլպաներ է գտել (հասկացա՞ք, չէ՞, որ հեչ էլ նոր չեն, դեն նետելու տոպրակներն է հագել):

Հետո շշերի վրայի կեղտոտ փականներից մի շար է պատրաստում, գցում է պարանոցը, թե՝ սա էլ իմ վզնոցը: Վզնոց մի ասա, մի գարշահոտ ու կեղտոտ պարան:

Երգած երգն էլ երգ լինի. քթի տակ երանությամբ մոթմոթում է, թե.

- Շուտով մեծանա՜մ, մեծանա՜մ,
Երկրի վրա մարդկանց կուլ տամ,
Գուլպաներս առնեմ-թռչեմ,
Ձկնիկներին ցանցս գցեմ,
Թռչուններին կերով խաբեմ,
Ի՞նչ կեր, մի լավ թունավորեմ,
Ծառերը մի լավ կրակի կտամ,
էլ վերջ, էլ ոչ մի անտառ:
Ինձնից լավ նկարիչ չկա,
Շագանակագույնից էլ լավ գույն չկա:

Շուտով մեծանա՜մ, մեծանա՜մ,
Երկիր մոլորակը կուլ տամ...

Երգում է, պարում, վերջում էլ ոտքերի տոպրակների մեջ օդ է հավաքում, նստում է խզբզած թղթերից պատրաստված զամբյուղի մեջ:

- Ա՜յ քեզ հիասքանչ օդապարիկ: Գնամ, տեսնեմ՝ մարդիկ էլ ինչե՞ր են ինձ համար պատրաստել,- ասում ու պատուհանից դուրս է թռչում:

Մեր մոլորակը, որ շունչը պահել էր այդ ընթացքում, որ Աղբիկի տհաճ հոտից չխեղդվի, հանկարծ ավելի ուժեղ է հազում ու լալիս, լալիս ու հազում:

Խե՜ղճ Երկիր. Մանչուկը գրկում է մոլորակին:

Բայց շուտով ինքն էլ պիտի շա՜տ զարմանա ու տխրի, երբ իմանա՝ հենց ինքը, ինքն ու իր պես մարդիկ են այդ Աղբիկին ստեղծել, ու դեռ մի բան էլ ավելին՝ կերակրում ու մեծացնում են ամեն օր:

Մոլորակը մի կերպ պատմում է Մանչուկին, թե ինչու է ինքը շագանակագույն:

- Ամեն ինչ շատ պարզ է. հիշո՞ւմ ես մի քանի օր առաջ դու և ընկերներդ եկաք այս սիրո՜ւն լճակում լողալու,- նա ասում ու մարմնի վրա ցույց է տալիս փոքրիկ կապույտի մի կտոր:

- Ես շա՜տ ուրախացա և խնդրեցի, որ իմ քամիները հանդարտվեն, արևի տաքուկ շողերը ձեզ խուտուտ տան: Ես շատ եմ սիրում ձեր խաղերը, թաքուն խաղում եմ ձեզ հետ, ծաղիկների փոշով խուտուտ եմ տալիս ձեր քիթիկը, դուք փռշտում եք, և դա շատ զվարճալի է: Գիտե՞ս, շատ եմ սիրում, երբ իմ ծառերի վրա աճած մրգերը խրթխրթացնում եք, և դրանք ձեզ դուր են գալիս, ծառերն էլ ուրախությունից առատ թթվածին են տալիս, և մենք բոլորս միասին շնչում ու վայելում ենք այն:

- Այո՜, ես հիշում եմ այդ օրը, ի՜նչ հաճելի էր ամեն բան, մենք շատ ուրախ ժամանակ անցկացրինք,- հիացմունքով հիշեց Մանչուկը:

- Ամեն բան չէ, որ հաճելի էր,- նեղացկոտ տխրությամբ ասած Երկիրը:- Դուք խաղացիք, վազվզեցիք, համեղ-համեղ կերաք ու բաժակները, ափսեները, թղթերն ու ուտելիքի մնացորդները, տոպրակներն ու շշերը լցրեցիք ծառերի տակ, գետի մեջ, չհավաքեցիք ձեր ետևից...

- Եվ ի՞նչ...- աչքերը զարմանքից կլորացնելով՝ չհասկացավ Մանչուկը:

- Եվ այն, որ ձեր գնալուց հետո ամպերը սևացան, լճակը փոթորկվեց, ծառերը բարկացած սկսեցին խշշալ. մենք բոլորս շա՜տ բարկացած ու վիրավորված էինք: Ես նույնիսկ որոշեցի մի լավ թափ տալ ինձ, շարժել երկիրն ու պատժել ձեզ, բայց չարեցի, որովհետև մենք սիրում ենք ձեզ, մեր կյանքը մարդկանց հետ շատ հետաքրքիր է անցնում, և ձեր մեջ կան մարդիկ, որ խնամում են ինձ, բնությունը, կենդանիներին, սիրում են, պաշտպանում, բայց ոչ բոլորը: Եվ մենք ոչ մի կերպ չենք հասկանում, թե ինչո՞ւ շատերը չեն սիրում մեզ... Ինչո՞ւ են աղտոտում մեր գեղեցիկ կապույտն ու կանաչը, ինչո՞ւ են աղբը ամենուր թողնում, տգեղացնում մեզ...

Ախր մենք ձեզ սիրում ենք, թթվածին ենք տալիս, գույնզգույն մարգագետիններ, սիրուն ծաղիկներ, հրաշալի անտառներ, կարկաչուն գետակներ, զուլալ ու մաքուր լճակներ... Ախր մենք ձեզ ի՞նչ վատություն ենք արել, որ այդպես տգեղացնում ու տանջում եք մեզ...,- խեղճ Երկիրը չկարողացավ շարունակել. արցունքները խեղդեցին կոկորդը...

Այս անգամ Մանչուկը չկարողացավ զսպել հուզմունքը, ու արցունքները գլորվեցին կանաչ ու սիրուն աչքերից: Երկիրը չէր ուզում, որ Մանչուկը տխրի ու գրկեց նրան և հենց այդ պահին էր, որ ինչ-որ կախարդական բան եղավ. գիտե՞ս՝ ինչի է դա նման. կարծես փորիկիդ ներսից փոքրիկ մարդուկները փետուրով խուտուտ տան. դա հա՛մ զվարճալի է, հա՛մ շատ հաճելի, հա՛մ ուրախ է, հա՛մ էլ շատ տաքուկ: Չգիտեմ, է՛, էդպիսի բաները հնարավոր չէ բացատրել: Եթե ուզում ես իմանալ՝ ինչ էր դա, կարող ես գրկել քեզ շատ սիրելի ու հարազատ մեկին ու ինքդ պարզել, թե դա ինչ կախարդանք էր:

Երկիրը զգաց, որ Մանչուկը սիրում է իրեն, ու Մանչուկը զգաց, որ Երկիրն էլ սիրում իրեն:

Մանչուկն ասաց, որ ուզում է օգնել Երկրին, որ չի ուզում մոլորակը զրկվի իր սիրուն ծառերից ու կենդանիներից, որ ջրերն աղտոտվեն, անտառները հրդեհվեն...

Ա՛յ, այդտեղ երևի ես կհայտնվեմ հեքիաթում, չեք մոռացե՞լ, չէ՞, ինձ՝ հեքիաթասաց Պապիկին, ի միջի այլոց, այս ամենը ես էի ձեզ պատմում...

Հա՛, կհայտնվեմ ու կասեմ, որ դրա համար անհրաժեշտ է պահպանել ու խնամել բնությունը, ազատվել վնասակար սովորություններից և նյութերից, չաղտոտել շրջակա միջավայրը, իսկ այն նյութերը, որ վնասակար են և վտանգավոր բնության համար, պետք է փորձել վերամշակել և պիտանի ու օգտակար դարձնել:

Հիմա էլ կլորացած աչքերով ու զարմանքից բաց բերանով Մանչուկը հարցնելու է, թե ինչ է նշանակում վերամշակել:

Ես իմ ճանապարհորդությունների ընթացքում շա՜տ աշխարհներում եմ եղել, տեսել հրաշալի ու զարմանալի բաներ, ուրախ ու տխուր բաներ, անպետք ու պետքական բաներ, բայց ավելի պետքական բան, քան գործարաններն են, որոնք վերամշակում են աղբը, մեկ էլ երևի իմ ճամպրուկն է եղել, որ տեսել եմ այսքան ժամանակ:

Արի՛ Մանչուկի հետ միասին ճամփորդենք դեպի վերամշակող գործարան, ու ես ընթացքում պատմեմ, թե ինչպես կարող ենք հավաքել անպետք իրերը, որոնք աղբ են, և պիտի նետենք աղբամանը՝ երկրորդ կյանք տալու և օգտակար դարձնելու համար: Օրինակ՝ թուղթը, որի վրա դու արդեն մի լա՜վ խզբզել ես, վերջում էլ ճմրթել ու նետել աղբարկղը, վերցնում ենք, տանում այդ գործարան, որտեղ աշխատում են խելացի, բանիմաց և Երկրի մասին հոգ տանող մարդիկ, որտեղ կան տարբեր գործիքներ, հաստոցներ և մեքենաներ: Գործարանում թուղթը մի լավ մշակում են տարբեր գործիքների միջոցով, որոնցից՝ ամենավերջինից, դուրս է գալիս մաքուր ու հարթ (ա՛յ քեզ հրաշք) լրիվ նոր թուղթ: Ահա՛, այսպիսով, մենք ունենում ենք դատարկ աղբաման, նոր թուղթ և չկտրված ծառ... հիմա կասես՝ ծառը ի՞նչ կապ ուներ մեր պատմության հետ... ա՜խր, դու խելացի ես շատ, պարզապես մի պահ մոռացար, չէ՞, որ թուղթը ստանում ենք ծառից, իսկ ծառը Երկիր մոլորակի այն կանաչն է, որը մենք չենք ուզում անհետանա:

Ի դեպ, նման գործարաններ մենք կարող ենք ուղարկել ոչ միայն անպիտան թուղթը, այլև տարբեր ապակե շշեր, որոնց միջի հյութը արդեն խմել ենք, տարբեր պլաստմասե տարաներ, որոնց միջի հեղուկով մայրիկը մի լավ լվացել է մեր ափսեները կամ լվացել է մեր կեղտոտ հագուստը: Այդ գործարաններ կարող ենք ուղարկել մեր տան աղբաններում հայտնված գրեթե բոլոր իրերը: Միայն, քանի որ դրանք տարբեր են, մենք պիտի օգնենք մեր հրաշագործ գործարաններին և տեսակավորենք աղբը, օրինակ՝ թուղթը ուղարկենք թուղթ վերամշակող գործարան, ապակին՝ ապակի վերամշակող գործարան, պլաստմասը՝ պլաստմաս վերամշակող: Դա շա՜տ հեշտ է, պարզապես պետք է տարբեր աղբամաններում հավաքել աղբը: Ի դեպ, ուտելիքի մնացորդները ևս կարող ենք չնետել, այլ հողի համար օգտակար կոմպոստ (ասել է թե՝ պարարտանյութ) պատրաստել:

Իսկ հիմա արի գնանք Մանչուկի սենյակ, որտեղ կան իրեր, որոնք կարող ենք ոչ միայն վերամշակել, այլ պարզապես վերանորոգել, ներկել, դարձնել բոլորովին թարմ իրեր (օրինակ՝ աթոռը, կահույքը, բազմոցը) ու կարիք չլինի դրանց փոխարեն գնել նորը. չէ՞ որ յուրաքանչյուր նոր ապրանք ստանալու համար մենք նորից ու նորից ծախսում ենք մեր մոլորակի ուժը, օգտագործում վնասակար նյութեր և աղտոտում շրջակա միջավայրը:

- Պապի՛կ,- բղավեց Մանչուկը, վեր թռավ, գնաց, վերցրեց անկյունում դրված ու թղթերով, շշերով, փականներով լցված դույլն ու շուռ տվեց ուղիղ... ճամպրուկիս մեջ:

Վա՛յ, Մանչու՛կ... ոնց որ եռացրած ջուրը գլխիս լցներ, բայց քիչ հետո գլխի ընկա, թե ինչու այդպես վարվեց...

- Պապի՛կ, խոստանում եմ, ես կհավաքեմ իմ բակն ու քաղաքը աղբից, երբեք էլ բնությունը չեմ աղտոտի, ծառեր չեմ կտրի, կենդանիներին կխնամեմ, չէ՞ որ բնության մեջ ամեն ինչ ու բոլորը շատ կարևոր են, իսկ դու այս աղբը տար ու նոր կյանք տուր այդ գործարանում:

Ես էլ վերցրի ճամպրուկս, ուր որ է՝ ուզում էի ճամփա ընկնել, որ Մանչուկի խնդրանքը կատարեմ, մեկ էլ որտեղից որտեղ այ էն անճոռնին, որ ականջ ցավեցնող երգեր էր երգում, աղբի հո՞տն առավ, թե՞ սուր աչքը տեսավ, հայտնվեց:

- Օհո՛, այս ինչքան նոր աղբ եք հավաքել ճամպրուկում: Ապա-ապա, տվե՛ք այստեղ, որ ավելի ուժեղանամ: Շատ քիչ մնաց, շուտով ձեզ կուլ կտամ, հա՛-հա՛-հա՛,- ուրախ ծղրտաց Աղբիկը՝ ցանկանալով քիթը խոթել ճամպրուկի մեջ և մի լավ փորփրել:

- Պապի՛կ, Երկի՛ր, ախր նա այնքա՛ն մեծ ու հզոր է. մենք անկարող ենք նրան հաղթել,- բացականչեց Մանչուկը:

- Մանչու՛կ, ախր քիչ առաջ մենք խոսեցինք: Հիշո՞ւմ ես այն կախարդական բառերը՝ տեսակավորում և վերամշակում: Արի մեր փոքրիկ ընթերցողի հետ միասին այս Աղբիկի հարցերը լուծենք՝ տարբեր մասերի բաժանենք, ու տես, թե ինչպես նա փոքրանալով՝ կկորցնի իր ուժը:

- Սրանց տես, որոշել եք վերջս տալ,- բղավեց Աղբիկը:

- Ոչ թե վերջդ տալ, այլ քեզ նոր կյանք տալ, դարձնել բարի և օգտակար,- ոգևորված ասաց Մանչուկը:

Դե՛, իմ փոքրի՛կ ընկեր, այժմ քո օգնության կարիքն ունենք: Աղբիկը կազմված է տարբեր տեսակի անպետք իրերից՝ թուղթ, ապակի, պլաստմաս, ուտելիքի մնացորդ և այլն: Արի միասին տեսակավորենք և գուշակենք, թե որ մասը որ աղբամանում է պետք տեղավորել:

Այո՛, ստացվեց, մեծ ու հսկա Աղբիկը փոքրացավ, կորցրեց իր չար ուժը, ու շուտով գործարաններից մեկում նրանից գուցե կստանան մի սիրուն ծաղկաման կամ մի գույնզգույն նոթատետր:

- Ների՛ր, հիմա կուզեի շարունակել պատմությունը, բայց շտապում եմ: Ես թռա՝ ճանապարհորդությունս շարունակելու:
- Էլ ո՞ւր:
- Դեպի այն գործարանը:

Շուտով Մանչուկն էլ կարթնանա: Զարմացա՞ր. սա իր երազն էր... Մանչուկը կարթնանա ու իրեն շրջապատող ամեն բան կթվա նույնը՝ մոլորակը՝ նվերի տուփից դուրս եկած գնդակ՝ վրան ինչ-որ անհասկանալի անուններ գրված, դե այն գնդակներից, որ կարելի է գրախանութներում հանդիպել տետրերի ու մատիտների կողքին, Աղբիկը՝ սովորական աղբակույտ՝ այն շշերից ու փականներից, որ ամեն տեղ կարելի է տեսնել ու ամեն ամեն օր օգտագործել և նետել մի կողմ, դե ես էլ մի պապիկ, ում փողոցում կարելի է հանդիպել ու չնկատել: Բայց ա՛յ Մանչուկն այլևս այն Մանչուկը չի լինի, որ փչեց մոմերն ու, ի՞նչ իմանաս՝ ի՞նչ երազանք անցավ նրա մտքով: Չէ՞ որ նա հանկարծ երազում պարզեց, թե ինչ է զգում մոլորակը, որի վրա ապրում ենք, բայց հաճախ մոռանում իր մասին: Նա կարթնանա բոլորովին-բոլորովին այլ Մանչուկ դարձած... Մանչուկ, որ սիրում է իր մոլորակը: Իսկ դո՞ւ...

Բայց, սպասի՛ր, մի բան էլ...

Չմոռանաս, ձեր բակում մի սևուլիկ շուն կա, եթե նրան կերակրես, ու նա կուշտ լինի, հաստատ չի հաչի էլ քեզ վրա: Բակի աղբը հավաքիր, իսկ նետելիս՝ միայն աղբամանի մեջ, ծառ տնկի՛ր, ծաղիկ ջրի՛ր, ու մենք անպայման կհանդիպենք, բայց այս անգամ ոչ թե շագանակագույն, այլ...

Կանաչ ու կապույտ նախշերով առողջ ու կլորիկ մի գնդակի վրա...

Իսկ հիմա, ի՛մ փոքրիկ բարեկամ, արի մի բան պայմանավորվենք:

Գրքի այս երկու էջերը ես դատարկ կթողնեմ, որ հեքիաթի բարի ընթացքը դու ինքդ շարունակես:

Հարցնում ես՝ ինչպե՞ս...

Երբ դու որևէ օգտակար գործ անես մեր մոլորակի կամ նրա բնակիչների համար, անպայման գրի առ այստեղ: Ամեն օր մի փոքրիկ կամ մեծ հրաշալի գործ: Իհարկե, այս էջերը չեն բավականացնի, քանի որ ես գիտեմ՝ դու շա՛տ օգտակար գործեր ես արդեն մտածել, բայց սա կարող է հրաշալի սկիզբ լինել...

Սկիզբ բարի և օգտակար գործերի, սկիզբ՝ հանուն իմ ու քո ընկերոջ՝ մեր ջերմ ու տաքուկ Երկիր մոլորակի...

Դե՛, սկսեցինք...

Ծրագիրն իրականացվում է «Հեքիաթերեն» շարժական ինտերակտիվ տիկնիկային թատրոնի կողմից «Աջակցություն քաղաքացիական հասարակությանը՝ հանուն բարեփոխումների վրա ներգործության» ծրագրի շրջանակում:

Գրքի բովանդակության համար պատասխանատու է միայն ստեղծողը: Դրանում արտահայտված տեսակետները / բովանդակությունը կարող են չհամընկնել Շվեդիայի կառավարության տեսակետների հետ:

«Աջակցություն քաղաքացիական հասարակությանը՝ հանուն բարեփոխումների վրա ներգործության» ծրագիրն իրականացվում է Եվրասիա համագործակցություն հիմնադրամի կողմից Շվեդիայի կառավարության աջակցությամբ:

ISBN 978-9939-76-976-9
© «Հեքիաթերեն», 2022